ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՆԵՐԿԱ ԳՏՆՎԵՑ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԿԱՄՐՋԻ ԲԱՑՄԱՆԸ

Ապրիլի 12-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ մասնակցեց Երևանի հարավային մուտքը քաղաքին կապող նորակառույց կամրջի բացման հանդիսավոր արարողությանը:

Հանդիսության ընթացքում Վեհափառ Հայրապետը աղոթքի հրավիրեց բոլոր ներկաներին՝ հանուն Հայրենիքի շինության ու ապահովության և ժողովրդի բարօրության:

Բացման արարողությանը ներկա էին ՀՀ ԱԺ նախագահ Արմեն Խաչատրյանը, ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը, Երևանի քաղաքապետ Ռոբերտ Նազարյանը, պետական և հոգևոր այրեր, կառույցի շինարարները:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ